373(179.22)(=91.99)

ՆԵՐՍԻՍԵԱՆ ԴՊՐՈՑԻ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԱՍԻ

373
Ա-63

ՀԱՄԱՌՕՏ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

Կարդացուած փետրուարի 14-ին 1896.

ԹԻՖԼԻՍ
Տարաձе и К°. || Տպարան Մ. Զարաձէի և Ընկ.
1895

373
Ա-63

ԱԶԳԱՅԻՆ Է
1852 թ.

896 года.

5435

Ա II 68019
Հ. 8

ՀԱՄԱՌՕՏ ՏԵՂԵԿԱԳԻՐ

189⁴/₅ ուսումնական տարուայ

I. ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ուսումնական տարին սկսելուց առաջ հին աշակերտները կային 306 հոգի, նոր ընդունուել են քննութեամբ 114 հոգի, այդպիսով 18⁹⁴/₉₅ ուսում. տարուայ սկզբում դպրոցում կային ընդամենը 420 աշակերտ։ Տարուայ սկզբում երկու պատրաստականները և երեք հիմնական դասարանները ունէին զուգընթաց բաժանմունքներ, մնացած երեք հիմնական դասարանները (IV, V և VI) չունէին այդպիսի բաժանմունքներ։ Այդպիսով դասարանների ընդհանուր թիւը տարուայ սկզբում էր 13։

Տարուայ ընթացքում թէ աշակերտների և թէ դասարանների թիւը աւելացաւ շնորհիւ այն հանգամանքի, որ ընդունուեցին 74 նոր աշակերտներ՝ Վեհափառ Կաթուղիկոսի բարեհաճ կամքով։ Նոր ընդունուած աշակերտները մտան զանազան դասարաններ՝ սկսած II-ից մինչև VI-ը։ IV դասարանում նոր ընդունուածների թիւը այնքան մեծ էր, որ հոգաբարձութիւնը ստիպուեց զուգընթաց բաց անել այդ դասարանի համար, այդպիսով տարուայ ընթացքում դասարանների թիւը հասաւ 14-ի։

Միւս կողմից տարուայ ընթացքում զանազան պատճառներով դպրոցից հեռացել են 54 աշակերտներ. այդ պատճառով տարուայ վերջը դպրոցում կային ընդամենը 440 աշակերտներ։ Հետևեալ աղիւսակը ցոյց է տալիս, թէ զանազան դասարաններում որքան աշակերտներ կային տարուայ վերջը։

I	և	I	զուգ.	պատրաստակ.	—86
II	և	II	»	»	—77
I	և	I	զուգ.	հիմնակ. դասարան	49
II	և	II	»	»	—48
III	և	III	»	»	—50
IV	և	IV	»	»	—63
		V	»	»	—35
		VI	»	»	—33
				Գումար	—440

Աշակերտների ընդհանուր թուից փոխադրուել են հետևեալ դասարանները (դրանց թուում են և աւարտողները) ընդամենը 192 հոգի, մնացել են նոյն դասարաններում 90 աշակերտ, իսկ մնացածները վերաքննութիւնն են ստացել։ Փոխադրուածները աւարտածների հետ միասին կազմում են աշակերտների ընդհանուր թուի միմիայն $43^1/_2$ տոկոս, որ չափազանց փոքր է.

Հաշուետուութեան տարում դպրոցը ունէր 25 որդեգիր և 30 թոշակառու. վերջիններները ստանում էին դպրոցից իւրաքանչիւրը ամսական 7 ր. բացի այդ դպրոցի հաշուով ճաշում էին որդեգիրների հետ 20 չքաւոր աշակերտներ։ Թէ թոշակառուները և թէ որդեգիրները աւելի մեծ առաջադիմութիւն են ցոյց տուել, քան դպրոցի միւս աշակերտները։

Ցուցակ 18⁹⁴/₉₅ տարում աւարտած աշակերտների

1, Աղամիրզեան Ստ. (ագուլեցի)
2, Ամատունի Հ. (ալէքսանդրապոլցի)
4, Աւագեան Ե. (իգդիրցի)
4, Բարսամեան Գ. (ալէքսանդրապոլցի)
5, Գալստեան Դ. (գօրեցի)
6, Զուրաբեան Ս. (լոռեցի)
7, Կարապետեան Յ. (ախալքալաքցի)
8: Համամչեան Ե. (կարսեցի)
9, Մակարեան Տ. (ալէքսանդրապոլցի)
10, Մելիք-Առաքելեան Ա. (խալֆալուեցի)
11, Մեհրաբեան Գ. (Թիֆլիսեցի)
12, Մկրաչեան Գ. (կարնեցի)
13, Յակոբջանեան Դ. (ախալցխացի)
14, Յովսէփեան Ե. (իգդիրցի)
15, Շաթիրեան Խ. (ղզլարեցի)
16, Զարբգչեան Ա. (կարնեցի)
17, Պապովեան Ա. (Թիֆլիսեցի)
18, Սիմէոնեան Շ. (քարվանսարեցի)
19, Սողոմոնեան Մ. (կարսեցի)
20, Վախտանգեան Ա. (Թիֆլիսեցի)
21, Վարդանեան Վ. (վաղարշապատցի)
22, Տէր-Գէորգեան Յ. (Թիֆլիսեցի)
24, Տէր-Խաչատրեան Ն. (շուշեցի)
25, Տէր-Սիմէոնեան Ա. (Համամլեցի)
26, Փերիխանեան Գ. (Թիֆլիսեցի)
27, Փոչարեան Ս. (Թոքեջէն գիւղից)

Հաշուետուութեան տարում եղել են երկու դպրոցական հանդէսներ (Թադէոս և Բարդուղիմէոսի տօնին և Վարդանանց տօնին) և մի գրական երեկոյ պ. Ստ. Մալխասեանի ղեկավարութեամբ։

II.

Հաշուետուութեան տարուայ ընթացքում դպրոցից հեռացան երկու ուսուցիչներ—պ. պ. Կանայեան և Մադաթեան՝ նոր պաշտօն ստանալու պատճառով, իսկ նրանց փոխարէն հրաւիրուեցին երկու նոր ուսուցիչներ—պ. պ. Մանուէլեան և Լիսիցեան։ Բացի այդ տեսչի պաշտօնակատարութեան համար հրաւիրուեց պ. Յ. Սաղաթէլեան նոյնպէս տարուայ ընթացքում։ Այդ փոփոխութիւններից յետոյ ուսուցչական խումբը հետևեալ կազմութիւնն ունէր։

Ուսուցիչ. ազգանունները	Ի՞նչ առարկայ էր դաս տալիս.
1. Սաղաթ.Յ.տեսչ.պաշտ.	Ընդհանուր պատմութիւն
2. Աղանեան Գ. քահ.	Կրօն և տօմարագիտութիւն
3. Սահակեան Ս. քահ.	Սրբազան պատմութիւն
4. Թիւսիկեան Լ.	Բնակ. պատմ., տիեզերագր. և բուսաբ.
5. Բարխուդարեան Գ.	Ռուսաց պատմ. և Ռուսաստ. աշխարհագ.
6. Զոհրաբեան Յ.	Թուաբան. հանրահաշիւ և երկրաչափութ.
7. Մելիք.-Ալլահվերդ. Ա.	Ֆիզիքա և բնախօսութիւն
8. Շահբուդաղեան Գ.	Հայոց լեզու և թուաբանութիւն
9. Ալխազեան Յ.	Ռուսաց լեզու (և վերակացու)
10. Պուշեան Պ.	Սրբազան պատմ. և քրիստոն. վարդապ.
11. Աբուլեան Կ.	Երգեցողութիւն (և վերակացու)
12. Սպարապետեան Ա.	Գծագրութիւն (և վերակացու)
14. Յարութիւնեան Իս.	Հոգեբանութիւն, տրամաբանութիւն, հայոց լեզու և թուաբանութիւն
14. Մանդինեան Ա.	Ընդհանուր աշխարհագ. և (դրադարանապ)
15. Լիսիցեան Սա.	Հայոց պատմութիւն
16. Միրզոյեան Գ.	Ռուսաց լեզու
17. Մանուէլեան Լ.	Ռուսաց լեզու, ընդհան. պատմութիւն
18. Գէրէսթէճեան Մ.	Գեղագրութիւն
19. Մալխասեան Սա.	Հայոց լեզու, տեսութիւն մատենագր. և հայոց մատենագրութիւն
20. Շամշինեան Յ.	Նկարչութիւն
21. Տէր-Յարութիւնեանն.	Ֆրանսերէն
22. Եկմալեան Մ.	Երգեցողութիւն
23. Փիրումեան Տ.	Հայոց լեզու
24. Ասիլեան Մ.	Եկեղ. պատմ., հայոց լեզու և հայոց պատմ.
25. Քոչարեան Յ.	Ռուսաց լեզու և ընդհան. պատմութիւն
26. Դաղբաշեան Յ.	Ուսումն Սուրբ Գրոց, եկեղեց. պատմ. և հայոց լեզու

Հաշուետուութեան տարուայ ընթացքում բոլոր ուսուցիչները միասին պէտք է տային ընդամենը 10,946 դաս, մինչդեռ տուել են 10,405 դաս, ուրեմն ամբ

ընթացքում հիւանդութեան կամ ուրիշ պատճառներով ուսուցիչները բաց են թողել ընդամենը 541 դաս։ Այդպիսով դասերի մօտաւորապէս 5% բաց է թողնուած։

Մանկավարժ. ժողով

$18^{94}/_{95}$ տարուայ ընթացքում կայացել են մանկավարժական ժողովի 30 նիստ, որոնց նիւթ եղել են հետևեալ խնդիրները. 1) աշակերտների ընդունելութիւն և վերաքննութիւն 2) ընտրութիւն որդեգիրների և թոշակառուների 4) ընտրութիւն գրքերի և ամսագրերի մատենադար. համար. 5) ֆիզիքական կաբինետի լրացում 5) ուսման ծրագրի թերութիւնները 6) գրականական երեկոների մասին խորհրդածութիւն 7) մարմնամարզութեան մասին 8) դասարանական քննիչ մասնաժողովների մասին 9) եկեղեցական և ազգային տօների պատշաճաւոր տօնելու մասին 10) տարեկան քննութիւնների մասին։

ՏՆՏԵՍԱԿԱՆ

Առ 1 յունուարի, 1896.

Ներսիսեան դպրոցի անմահ հիմնադիր Ներսէս V կաթուղիկոսը՝ քաջ ըմբռնելով մշտական և մնայուն նիւթական աղբիւրների նշանակութիւնը դպրոցի երկարատև և կանոնաւոր գործունէութեան համար՝ ձեռնարկում է զանազան միջոցների։

Նախ և առաջ՝ նա կառուցանում է ուսումնարանի շինութեան դիմացը մի շարք կրպակներ. որոնց արդիւնքը մասամբ լրացնում է այն ժամանակուայ ուսումնարանական պահանջը։ Այս գեղեցիկ գործը օրինակ է դառնում հոգաբարձութեան համար. սա ևս աշխատում է կալուածքները աւելացնել, նորերը շինելով կամ եղածները ընդարձակելով։ Օգնութեան հասնում է նոյնպէս հասարակութիւնը. զանազան ժամանակներում բարեպաշտ անձինք, կտակել կամ իւրեանց կենդանութեան ժամանակ նուիրել են դպրոցին անշարժ կալուածքներ, որոնք միջոց են տուել հոգաբարձութեան՝ հասցնել դպրոցը ներկայ նիւթական բաւարար դրութեանը։

Յիշենք մի առ մի ուսումնարանական կալուածքները, ցոյց տալով, թէ իւրաքանչիւրը նրանցից ո՞ւմնից է մնացել և որքան արդիւնք է բերում։

1, Հին դպրոցական տունն, որ կառուցել է Ներսէս V կաթուղիկոսը բերում է տարեկան . 10900 ռ.

2, Հին դպրոցի հանդէպ գտնուած 21 կըպակները, որոնք սեպհականացրած են նոյնպէս Ներսէս կաթողիկոսից . . . . . 7000 ռ.

3, 21 կրպակները, որոնք գտնուում են հին դպրոցի հրապարակին կից . . . . 3903 ռ.

Այս վերջին երկու կալուածքների գետինը սեպհականացրել է դպրոցի համար Մատթէոս կաթուղիկոսը։

4, Այժմեան դպրոցական տունն, որ գնել է հոգաբարձութիւնը 1856 թ. . . . 1181 ռ.

5, Կալուած, որ ընծայած է Աւետիք Փիրոյեանցից . . . . . 14229 ռ.

6, Կրպակ, ընծայած Գրիգոր Շէրգիլեանցից 200 ռ.

7, Կրպակ, ընծայած Օթար Շաղբաթեանցից 200 ռ.

8, Տուն, ընծայած Ստեփաննոս Գուլիփաշայեանցից . . . . . 200 ռ.

9, Կալուած, ընծայած Յարութիւն Օքոյեանից 1305 ռ.

Այս կալուածները գտնվում են Թիֆլիս քաղաքի զանազան մասերում.

10, Այգի, ընծայած Վրաց իշխան Օթար Ամիլախվարուց Սոդանլուխում . . . . 120 ռ.

11, Այգի, ընծայած Ստեփան Ղամբարեանցից Թէլէթում . . . . . 10 ռ.

12, Կրպակ Թէլէթ ուխտատեղու . . 352 ռ.

13, Դպրոցապատկան դատարկ գետինը . 240 —

14, Տուն Աբրահամեանցի . . . 350 ռ.

40190 ռ.

Մինչև յունվարի 1-ը 1896 թուի այդ կալուածքների եկամուտն էր 37525 ռ., ուրեմն այս տարի դպրոցը կըստանայ աւելի . . 2665 ռ.

Ներսէս Ե. կաթուղիկոսը յատկացրել է ուսումնարանին նաև Թիֆլիսի թեմի մոմավաճա-

ռութեան արդիւնքը, որ այժմ բերում է կապալադրամ տարեկան . . . . . 9500 ռ.

Նոյնպէս յատկացրել է ուսումնարանին և ուխտատեղերի արդիւնքը, որ տարեկան հասնում է մինչև . . . . . 6720 ռ.

որից հանած ծախք . . . . 2950 ռ.

զուտ արդիւնք մնում է . . . 3770 ռ.։

Այդ ուխտատեղերն են.—Թէլէթ, Շաւնաբաթ, Ծաղկեվանք, Կրծանիս, Շուինդիս, Բօլնիս, և այլ և այլ ուխտատեղեր Թիֆլիսի թեմում։

Դպրոցին պատկանում են հետևեալ տները, որոնց արդիւնքը տակաւին չէ ստացվում.—

1, Տուն, ընծայած Իշխան Յովսէփ Երկայնաբազուկ Արղութեանից.այդ տան արդիւնքը վայելում է հանգուցեալի եղբայրը, համաձայն կտակի, ցմահ իւր։ Այս տունը գնահատուած է հրդեհից ապահովութեան համար . . . . . 19400 ռ.

2, Աստրախանում, տուն՝ ընծայած Մահտեսի Յարութիւն Բէժանեան Յարութիւնեանից, որ դառնալու է դպրոցիս սեպհականութիւն, կը-տակողի մահից յետոյ։

3, Դպրոցը ստացել է ևս երեք կնքած ծրարներ մեծարգոյ պ. պ. Յարութիւն Շամխարեանցից, Արտեմ Իւզբաշեանից և Գրիգոր Բայանդուրեանից. այդ ծրարները պէտք է բացուեն կտակողների մահից յետոյ. ծրարները գնահատութեամբ 3000 ռ. պահւում են Թիֆլիսի առևտրական բանկում.

4, Հանգուցեալ տիկին Նունէ Եւանգուլեանը կտակել է 10000 ռ., որ տակաւին չէ ստացուել։

Դպրոցը ունի և բարերարներից ստացած կտակներով գումարներ, որոնք տոկոսաբեր թղթերով պահպանւում են արքունական բանկի Թիֆ. բաժնի մէջ. այն է.

1, Աստիճանաւոր Յովսէփ Էֆէնդեանցից 73451.71½

2, Եկատերինէ Ռօտինեանցից . . 1193.28½

3, Երդուեալ հաւատարմատար Վարդան Եղիազարեանից. իւր հօր յիշատակին . . — 156.24.

4, Գորու քաղաքացի Եսայի Տ. Դաւթեանցից 5128.89.

5, Թիֆլիսի քաղաքացի Սողոմոն Վարդանեանցից . . . . . —4726.21.

6, Թիֆլիսի հայ հասարակութիւնից Մակար կաթուղիկոսի անունով . . . . —4457.29.

7, Ղզլարեցի ա. կարգի վաճառական Մինաս Սամուէլեանից . . . . . —4269.37.

8, Այրի Վարվարիայ Երուսալիմսկուց . —6145.15.

9, Թիֆլիսի արհեստաւոր Օթար Շաղբաթեանից . . . . . — 278.22.

10, Եսայի Արք-Եպիսկոպոս Աստուածատրեացից . . . . . —8237.98.

11, Թիֆլիսեցի Կոլլեժսկի Սովետնիկ Ալէքսանդր Թայիրեանից . . . . . —1775.13.

12, Թիֆլիսի տոհմական պատուաւոր քաղաքացի Գէորգ Փրիդոնեանից . . . —5601.76.

13 Թիֆլիսի ա. կարգի վաճառական Գրիգոր Շիօյեանցից . . . . . —5774.60.

14, Այրի Մայիայ Փուղինեանցից . . —1195.83.

15, Մարիամ Սերեդենկոյից . . . —1000.34.

16, Ղազախեցի Շաքար Եարալեանից . —1070.34.

17, Հանդուցեալ Յովհաննէս Անանեանից յանուն Ալամդարեանի . . . . —5463.74.

18, Նունէ Ղամբարեանից . . . —3514.71.

19, Թիֆլիսի պատուաւոր քաղաքացի Յարութիւն Գրիգորեանից . . . . —6758.84.

20, Թիֆլիսի հասարակութիւնից ի յիշատակ Յովհաննէս քահանայ Սարգսեանցի . —1309.15.

21, Նուիրաբերութիւններ երգեցիկ խմբի անունով . . . . . — 234.77.

141743.56.

Այս գումարի բերած տոկոսներից պէտք է հանել 6555 ր. երկամեայ տոկոս, որ միացրած է շարժական գումարին:

Անձեռնմխելի գումարների տոկոսներով պահպանւում են որդեգիրներ և չքաւոր երթևեկ աշակերտներ:

Հոգաբարձութեան գլխաւոր հոգացողութեան առարկաներից մէկն է եղել մշակել նոր շինութիւն կառուցանելու խնդիրը: Ամենամօտ ժամանակում այդ խնդիրը կըստանայ վերջնական լուծում: Նոր շինութեան կառուցանելու համար եղել են ընծայաբերութիւններ զանազան բարերարներից . . . . . —9177.57.

Դպրոցը յատկացրել է իւր խնայած միջոցներից 50.771.30.

Այսպէս ուրեմն դպրոցն ունի շինութեան անունով . . . . . .—59948.87.

Այդ գումարը գտնւում է զանազան բանկային հիմնարկութիւններում:—1895 թուականին դպրոցը ունեցել է միայն անշարժ կալուածքներից, ուխտատեղերից, մոմավաճառութիւնից և անակնկալ . . . . . 51019.73.

1896 ամի յունուարին ստացուել է կալուածներից ապառիկ . . . . . — 3507.70.

Վերև յիշած երկամեայ տոկոսը . . — 6555 ր.

Մնում է ապառիկ ստանալու . . — 886.88.

Նոյն թուականին եղել է ծախք. որդեգիր-

ների, չքաւոր աշակերտների համար, ռոճիկ ուսուցիչների և ծառայողների, թոշակադրամ չքաւոր աշակերտների, կալուածների նորոգութեան, ապահովութեան կալուածների, հանդերձեղէն որդեգիրների համար, մանր ծախք և այլն . . —59712.44.

Ծախքերը աւելացել են այն պատճառով, որ Ծիրանաւոր ուխտատեղու շինութիւնները միանգամայն վերանորոգուել են և անակընկալ ծախք է գոյացել դպրոցի 75-ամեայ պատմութիւնը գրելու համար։ (750 ռ.)։

Հոգաբարձութիւնը մտադիր է կատարել դպրոցիս 75-ամեակի հանդէսը 1897 թուի փետրվարի 14-ին։

1896 թուականի նախահաշուով սպասւում է

մուտք . . . . . —62571.

ծախք . . . . . —61891.62.

Ս.ռ 1.ն յունուարի 1896 թուի գանձարանում եղեւաց . . . . . 218142.43.

որի մէջ են.

1, գրաւական՝ կապալառուներից ստացած—16450 ռ.

2, յատկացրած դպրոցի նոր շինութեան համար . . . . . 59948.87.

3, անձեռնմխելի գումար . . . 141743.56.

որից պէտք է հանել . . . . 6555.—

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1971 Թ.

Դիւանատուն խորհրդարանի հոգաբարձութեան

1) Թուղթ եկեալ— 871.
2. » ելեալ—1122.
3. Կազմած գործեր—61.
4. Օրագրներ — 51.
5. Հոգաբարձական ժողովներ—
ա) սովորական —47.
բ) արտաքոյ կարգի— 4.



[504.]

A II 68019

ՀԱՅԿ.ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ

Գ. ՍԱՀՄՅԱՆ 4 ՓՈՂՈՑ ՀԱՍ.
ՀԱՄԱՐ
ԳՐԱԴԱՐԱՆ

Գ.Ս.Ա 2 ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՍՈՒ-ԵՐԵՎԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
Институт Маркса